


բիւններու համբերեցիք, որպիսի հաւածանքներ քաշեցիք, կըսէր. նոյն սիրով յառաջ գնացեք, եւ անշուշտ եղիք որ մինչեւ վերջը յաղթող պիտի ըլլաք յամենայնի : » Դանի որ կրմտածէր քեզ ղեռահասակ որդին քովէն զատուած ատենը գրիչ բռնել անգամ չէր գիտեր, եւ հիմա քաջութեամբ իրեն գրագրութիւն կընէ, իր հարկաւոր նամակները կըգրէ, կըշարադրէ, խելացի պատասխաններ կ'առնէ. կուտայ, վարքն ալ զգալի կերպով փոխուած կըբուած, չէր գիտեր ինչպէս մեզի շնորհակալ ըլլայ որ զանիկայ այսչափ քիչ ատենի մէջ փոխեր՝ բարեկիրք տղայ մը ըրեր եմք, որով քաջայոյս կըլլար քեզ օր մը զինքը ազգին եւ ընտանեացը հարկաւոր անձ մը պիտի տեսնէ :

Ազնուասիրտ Գեորգ Աղայն իր գործունեայ ազգասիրութեանն ու սրտին կատարեալ գոհութեանը նշան մըն ալ ուզեց Վարժարանիս մէջ բողոյ. եւ խելով որ ունեցած մէկ կովերնիս բազմաթիւ աշակերտաց առաւօտեան նախաճաշկին անխառն զուտ կաթ հասցընել չկարենալով կը հարկադրիմք ստակով դրսէն ալ գնելու, հինգ հարիւր ֆրանք տուաւ եւ խնդրեց որ ի յիշատակ իւր կով մը գնուի : Տարակոյս չունիմք որ մեր ու մեր աշակերտաց շնորհակալութեանցը՝ իրենցն ալ կըխառնեն սիրով բոլոր այս ազգային Վարժարանիս ծաղկին ու փառաւորութիւնը փափաքող բարեսէր Հայկազունք, մեզի հետ ճանչնալով Մեծարգոյ Գեորգ Աղայն « Այր անկեղծ եւ եռանդուն, որպիսիս սակաւս եւ տեսանել, » ինչպէս որ զինքը կրկոյճէ Գերապատիւ Գաբրիէլ վարդապետը իր մեզի գրած վերջին քղբին մէջ :

ՃԱՆՃՆԵՐԸ ԶԱՐԳԵՆՈՒ ՀՆԱՐԳ. — Ճանճերուն տուած նեղութենէն ազատելու համար զանոնք ջարդելու այլ եւ այլ հնարքներ գտած են մարդիկ. բայց մեք հոս ամենէն պարզն ու ամենէն անվտանգը ղենմք : Երկու բարակ տախտակով գրքի կողքին պէս բան մը շինէ՝ կաշիով երկու տախտակներն իրարու միացընելով, ինչպէս որ պատկերին մէջ կըտեսնես. յետոյ անոնց ներսի կողմը ջրախառն մեղր քսէ, քիչ մը բաց ու անանկ սեղանի մը վրայ կամ գետինը բող : Երնայիս որ մէկէն ճանճերը վրան կըբափին. ինչպէս քեզ բաց կեցած գիրք մը յանկարծակի գոցելի՝ այնպէս տախտակները. շուտով մը իրարու զարկ. անշուշտ եղիք որ հարիւրաւոր ճանճ մէկէն կըստակեցընես : Այս գործողութիւնը կրնայ մարդ ետեւէ ետեւ քանի ան-

գամ որ ուզէ ընել՝ մինչեւ որ բոլորովին ճանճերը ջնջուին :

Երբեմն ախոռներու մէջ ալ տեսակ մը ճանճեր, պիծակներ ու բրետներ կըլլան որ կենդանեաց մեծ անհանգստութիւն կուտան. այնպիսի ատեն պէտք է ախոռին պատուհաններն ու բոլոր ծա-



կերը գոցել՝ այնպէս որ բոլորովին խաւարի : Անանկ քառորդ մը բողեւէն յետոյ պատուհանի կամ երդիքի մը փեղկը քիչ մը բանալու է որ անկեց լուսոյ ճառագայթ մը ներս գարնէ. կըտեսնես որ բոլոր ճանճերն անկեց դուրս կեցնեն ու ախոռին մէջ հատ մը չմնար :

ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԿ. Այս օրերս Փարիզու մօտ ծեր մարդ մը մեռեր է, որ գրեթէ բոլոր կեանքը չոր հաց ուտելով անցուցեր է եղեր : Մինչեւ մահուան հիւանդութեան ժամանակը աշխատեր է, եւ բժիշկ մը կանչել տալու համար հարկ եղեր է որ դրացիները խոստանան անոր վարձքը տալ : Դեղի տեղ ալ միշտ պաղ ջուր կըլսմէ եղեր, ըսելով քեզ՝ ղեղավաճառները շատ սուղ կըվաճառեն դեղերը :

Այս անմիտ մարդը, (վասն զի այս աստիճանի ազան ըլլալու համար մէկը խելքը կորսընցուցած պէտք է որ ըլլայ,) ձմեռը ոչ հաստկեկ հագուստ կըհագնէր եւ ոչ կրակ կըվառէր որ տաքնար. եւ քեզ օր մէկը զինքը յորդորէր որ տաք բան մը հագնի կամ քիչ մը կրակ վառէ, պատասխան կուտար քեզ տարին հինգ հազար ֆրանք եկամուտ ունենալով այդ բաները կարելի չէ ընել : Մեռնելէն յետոյ եղբայրը որ իր միակ ժառանգն էր, տանը չորս դին պահուած խել մը ոսկի ու արծաթ գտաւ :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵՆԱՆ.

Typographie arménienne ERNEST MEYER, 3, rue de l'Abbaye, à Paris.